ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված խորհրդակցության

18.03.2024թ. **ք.Վանաձոր**

Մասնակցում էին

Գ.Ասրյանը- մարզպետի տեղակալ
Հ.Ավետիսյանը- մարզպետի տեղակալ
Կ.Աշրաֆյանը- մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար
Մ.Դալլաքյանը, Ա.Բեջանյանը, Ռ.Պողոսյանը, Գ.Տոնոյանը, Վ.Հովհաննիսյանը, Ա.Թումանյանը, Կ.Ադամյանը, Ռ.Մարգարյանը, Է.Հախվերդյանը, Գ.Բաղդասարյանը, Մ.Սարգսյանը, Ա.Բաղդասարյանը
Տ.Խաչատրյանը- մարզպետի օգնական

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. Մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարների կողմից նախորդ՝ 09.02.2024թ.-ի խորհրդակցությունից հետո կատարված և առաջիկայում կատարվելիք աշխատանքների վերաբերյալ:
(զեկ. մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ)
2. Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Գ.Ասրյանին, Հ.Ավետիսյանին և մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Մ.Դալլաքյանին՝

Ամենօրյա հետևողական աշխատանքներ իրականացնել համայնքների ղեկավարների հետ սեփական եկամուտների հավաքագրման պլանային ցուցանիշները ապահովելու ուղղությամբ, այդ նպատակով նաև այցեր իրականացնել մարզի տարածաշրջաններ:

2. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Գ.Ասրյանին, Հ.Ավետիսյանին և մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Ռ.Պողոսյանին՝

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված քաղաքացիների հետ հանդիպումների ընթացքում իրազեկել պետության կողմից իրականացվող բազմաթիվ ծրագրերի և դրանցից օգտվելու կարգի և պայմանների մասին (այդ թվում նաև ՝ պետպատվերի շրջանակներում առողջապահական ծառայություններից անվճար օգտվելու հնարավորության մասին):

3. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Հ.Ավետիսյանին և ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյանին ՝

3.1 Քննարկել և ներկայացնել տեղեկատվություն սուբվենցիոն և կապիտալ ծրագրերով իրականացվող շինարարական, ինչպես նաև ուշացած կամ ժամկետանց կատարվող աշխատանքների ընթացքի վերաբերյալ.

3.2 Ներկայացնել առաջարկություններ Վանաձորի թիվ 23 դպրոցի բակի բարեկարգման, Ալավերդու թիվ 2 դպրոցի և թիվ 12 դպրոցի մարզադահլիճի վերանորոգման վերաբերյալ:

4. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պարտականությունները կատարող Գ. Տոնոյանին՝

4.1 Անհրաժեշտ ուշադրության կենտրոնում պահել մարզային ենթակայության դպրոցների կառավարման խորհուրդների աշխատանքի արդյունավետության բարձրացման գործընթացը,

4.2 Ներկայացնել տեղեկատվություն 2024թ. ընթացքում պաշտոնավարման ժամկետները ավարտող մարզային ենթակայության դպրոցների տնօրենների վերաբերյալ:

5. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պաշտպանության վարչության պետ Ա.Թումանյանին՝

Անհրաժեշտ իրազեկման աշխատանքներ իրականացնել մարզի համայնքներում գյուղատնտեսական պետական աջակցման ծրագրերի իրականացման վերաբերյալ (այդ թվում նաև՝ բուսաբուծության աջակցության հաստատված ծրագրի), այդ նպատակով, անհրաժեշտության դեպքում, անցկացնել արտագնա խորհրդակցություններ:

19/03/2024

X

ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՂԱԶԱՐՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99